

## Հայաստանը դարձնել դրախտ տաղանդների համար Սա է կառավարության ռազմավարական տեսլականը տնտեսական ոլորտում



Վարչապետ Նիկոլ Փաշինյանը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության միստերի դահլիճում մասնակցել է «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղեցույցները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովին, որը նվիրված է թավշյա հեղափոխության միամյակին (2018-2019թթ.):

Վարչապետը ողջունել է գիտաժողովի անցկացումը և նշել, որ կառավարության համար կարևոր է, որպեսզի գիտական, փորձագիտական հանրությունն իրեն ներգրաված զգա այն պրոցեսներում, որոնք այսօր երկրում կատարվում են: «Կառավարությունը չպետք է լինի մեկուսացած և պետք է գիտական, փորձագիտական հանրության հետ լինի մշտական հաղորդակցության մեջ: Իհարկե, սա չի նշանակում, որ բոլոր հարցերում մեր տեսակետները կհամընկնեն, բայց ես համոզված եմ, որ այս տեսակետների բախման, քննարկման ընթացքում ի հայտ կգան արժեքավոր մտքեր, զարգացումներ, որոնք կիրառվեն և որոնք կապ չեն ունենա պահի կոնյուկտուրայի հետ ու որոնք ավելի երկարաժամկետ նշանակություն կունենան»,- ասել է Նիկոլ Փաշինյանը:

Այնուհետև զեկույցներով հանդես են եկել տնտեսագետ, փորձագետ Վահագն Խաչատրյանը, ՀՀՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ., փորձագետ Աստուհ Մարգարյանը, ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, տ.գ.թ. Հայկ Մարկոսյանը, ՀՀՏՀ տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ պաշտպանության նախարարության ՊԱՀՀ հետազոտող-վերլուծաբան, տ.գ.թ., դոցենտ Գայանե Հարությունյանը, տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը, ՀՀՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տ.գ.թ., պրոֆեսոր Սամվել Ավետիսյանը, ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, տ.գ.թ. Սվետլանա Դավթյանը, ԵՊՀ դասախոս, որակավորված աուդիտոր, տ.գ.թ., դոցենտ Տիգրան Հարությունյանը և ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, տ.գ.թ. Մերի Մառուչարյանը:

Նրանք կառավարությանը ներկայացրել են առաջարկություններ, որոնք բխում են 2019թ. փետրվարի 8-ին ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 5-ամյա ծրագրի ելակետային դրույթներից:

Ամփոփելով գիտաժողովի աշխատանքները՝ վարչապետ Փաշինյանը, մասնավորապես, նշել է. «Ընդհանուր առմամբ, կարող եմ ասել, որ գործնականում այստեղ բարձրացված հարցերի ամբողջ շրջանակը Հայաստանի կառավարության գործունեության օրակարգում է, ինչը մեծ հաշվով լավ մոտրություն է և ցույց է տալիս, որ այնուամենայնիվ, բացի այս կարգի միջոցառումներից, մեր գիտական և փորձագիտական հանրության հետ հաղորդակցության այլ խողովակներ էլ ունենք և, ըստ էության, կարողանում ենք ընդհանուր դաշտ ձևավորել, որտեղ աշխատում ենք: Ճիշտ է, հնարավոր է անձամբ, բնականաբար, չեն կարող բոլորի հետ մեծ ծավալի շփումներ ունենալ, բայց այս քննարկումը ցույց է տալիս, որ մեր կառավարության ներկայացուցիչներն, այնուամենայնիվ, շփվում են և ձեզնից նաև հավաքագրած տեղեկատվությունը բերում են և դարձնում կառավարության օրակարգ:

Շատ խոսվեց և խոսվել է փոքր հողակտորների խնդրի մասին: Այժմ կառավարությունում շատ մեծ ինտենսիվությամբ այս խնդրի վրա աշխատում ենք, որպեսզի կարողա-

նանք փոքր և չօգտագործվող հողակտորները շրջանառության մեջ դնել: Եվ այստեղ ամենամեծ խնդիրը, որ պետք է լուծենք, զուտ իրավական է, որպեսզի քաղաքացիների սեփականության իրավունքների խախտումներ տեղի չունենան և նրանց իրավունքները լիարժեքորեն պաշտպանվեն:

Այստեղ շատ կարևոր նշանակություն տրվեց հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտմանը: Երևի տեղյակ եք, որ մենք ընդերքի ոլորտում իրական սեփականատերերի հայտնաբերման հետ կապված օրենսդրական փաթեթ ենք ներկայացրել, որը սույն թվականի հուլիսի 1-ից մտնում է ուժի մեջ:

Հանքարդյունաբերության հաջորդ շատ կարևոր խնդիրը ոլորտի կառուցվածքն էր, երբ նշվեց, որ մեր հանքարդյունաբերության արտահանման 90 տոկոսը խտանյութն է: Եվ սա, իհարկե, մեծ խնդիր է, ինչը նշանակում է, որ մեր պետությունը, ըստ էության, այս առումով հանքահումքային երկրի կարգավիճակ ունի՝ արանից բխող հետևանքներով: Մեր խնդիրն է՝ այս հանքարդյունաբերության ցիկլը հնարավորինս երկարացնել: Այս կապակցությամբ, իհարկե, կառավարությունը քննարկումներ, բանակցություններ ունի, մի քանի ներդրումային առաջարկներ կան և մենք հույս ունենք, որ այդ ներդրումային առաջարկներից զոմե մեկն իրականություն կդառնա և մենք դրա համար կանենք ամեն ինչ: Այստեղ, իհարկե, շատ բան որոշում է ընթացիկ կոնյուկտուրան և երկարաժամկետ կանխատեսումները՝ կապված մետաղների գների հետ, բայց այս առումով, կարծես թե, կան որոշակի լավատեսական ազդակներ:

Կառավարությունում շատ կարևոր թեմա է ընկերությունների բաժնետոմսերի բաց վաճառքի հարցը: Այստեղ ելույթներից մեկում նշվեց, որ պետք է քննարկել կենսաթոշակային ֆոնդերը ցածր ռիսկային տեխնոլոգիական ոլորտներում ներդնելու հարցը: Ես տեղյակ եմ, որ հենց այս կապակցությամբ նաև մեր կենսաթոշակային ֆոնդերն են որոշակի հետաքրքրություն ցուցաբերել, որպեսզի այս բաժնետոմսերից զենն և ներդրումներ անեն այդ ոլորտում: Իհարկե, սա առաջին ծիծեռնակն է, մենք հիմա մույնիսկ մտածում ենք, որ գտնենք որևէ պետական ընկերություն, զբաղվենք նրա առողջացման և թափանցիկության հարցերով ու փորձենք նաև արժեթղթերը բորսա հանել, ինչը կքաջալերի այլ ընկերություններին:

Ես ուզում եմ առանձին անդրադառնալ ռազմարդյունաբերության թեմային: Շատ ճիշտ նշվեց, որ ընդհանրապես ռազմական ծախսերը մեր բյուջեի վրա բավականին ծանրակշիռ տեղ ունեն: Լիովին համաձայն եմ այն դիտարկման հետ, թե մենք պետք է այնպես անենք, որ այդ ծախսերը ոչ թե բեռ լինեն, այլ հնարավորություն՝ տնտեսության զարգացման համար, ընդ որում, նաև ձեր նշած մեխանիկայի և այլ ոլորտներում: Այս նկատառումով է, որ մենք ՀՀ-ում ստեղծում ենք Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն, որի խնդիրը պետք է լինի հենց այսպիսին. մենք պետք է փորձենք մեր ունեցած հենքի վրա, էական չէ հենքն ինչպիսին է, կառուցել ահա այդպիսի կառուցվածք, որտեղ կկարողանանք իսկապես մեր զինված ուժերին ժամանակակից չափանիշներին համապատասխանող արտադրանք առաջարկել, բայց նաև մեր նպատակակետը, ինչպես ընդհանուր տնտեսության համար, պետք է լինի արտահանումը, ինչը շատ կարևոր ուղղություն է:

Բայց նաև ինչպես ընդհանուր տնտեսության համար, մեր նպատակակետը պետք է լինի արտահանումը, ինչը շատ կարևոր ուղղություն է: Ընդհանուր առմամբ, լավ լուրն այն

է, որ 21-րդ դարում տնտեսության առաջատար շարժիչ ուժը դարձել են տեխնոլոգիաները: Ինչո՞ւ է սա մեզ համար լավ լուր, որովհետև տեխնոլոգիաներն այն միջոցն են, որոնք կարող են օգնել մեզ հաղթահարել մեր տրամապորտային և այլ բազմաթիվ սահմանափակումներ:

Համացանցում վերջին 20 տարվա ընթացքում աշխարհի տնտեսության առաջատար 20 ընկերությունների մասին հոլովակ է պտտվում և դրան հետևելով տեսնում ենք, որ եթե, օրինակ, 25 տարի առաջ աշխարհի ամենաառաջատար, թանկարժեք 20 ընկերություններն այն ընկերություններն էին, որոնք տիրապետում էին նավթի, գազի կամ որևէ մյուսական միջոցի, ապա այժմ դա փոխվել է և փոխվել է այնպես, որ հիմա աշխարհի առաջատար ամենահարուստ 20 ընկերությունները նրանք են, որոնք հիմնված են մախիկնում բնության մեջ գոյություն չունեցող երևույթների վրա: Սա, կարծում եմ, մեր տնտեսակարգի կարևոր առանձնահատկությունն է, որը մեզ համար լավ լուր է, որովհետև հիմա ամենաթանկ ընկերությունների շարքում առնվազն կեսը նրանք են, որոնք հիմնվում են մի մատերիայի վրա, որը մախիկնում ուղղակի գոյություն չի ունեցել և դա ընդամենը մարդկային մտքի արտադրություն է:

Հետևաբար, սա նշանակում է, որ կարելի է ստեղծել մեր և կանխատեսելի երևույթներ, որոնք կարող են առաջ մղել տնտեսությունը: Այս առումով, կարծում եմ, որ սրա համար հիմք է դարձել այն, երբ արդյունավետությունը դարձել է մատուցողության կարևոր հենասյուն, որ այն, ինչ անում ենք, ծախսում ենք, օգտագործում, սպառում՝ պետք է անենք արդյունավետ:

Կարծում եմ՝ արդյունավետությունը և տեխնոլոգիական մատուցողությունը մենք պետք է փորձենք մեզ համար դարձնել մենթալիտետ, մատուցողության կետ: Այստեղ, իհարկե, համաձայն եմ այն ձևակերպման հետ, որ առանցքային նշանակություն ունի մեր կրթական համակարգը: Այստեղ էլ մենք այսօր դնում ենք արդյունավետության խնդիր, որովհետև եթե մենք օրը 5-6-7 ժամ երեխային զբաղեցնում ենք՝ պետք է շատ հստակ հաշվարկներ, թե այդ երեխային ինչ ենք տալիս, ինչի համար ենք տալիս և ինչ ենք ստանալու դրա արդյունքում: Սա շատ կարևոր բան է, որովհետև եթե ուսումնասիրենք մեր ծրագրերը՝ կարող է պարզվել, որ մենք տալիս ենք շատ կամ քիչ ինչ-որ բան, որ երեխային պետք չէ և ոչ միայն երեխային պետք չէ, այլ մեզ բոլորիս պետք չէ, որ մենք երեխային այդ գիտելիքը կամ առարկան փորձենք մատուցել:

Հետևաբար, արդյունավետությունը և տաղանդի, աշխատանքի խթանումը, սեփական ուժերի հավաստալու գործում մեր քաղաքացիներին աջակցելը բոլոր դեպքերում դառնում է մեր կառավարության ամենակարևոր առաջնահերթությունը:

Հայաստանի Հանրապետությունում չպետք է լինեն այնպիսի երևույթներ՝ սկսած քաղաքական, վերջապահ կրթական համակարգով, որոնք մարդուն անընդհատ ներշնչեն, որ ինքն ինչ-որ բան չի կարող, որ իր մոտ չի ստացվի, որ ինքն անկարող է, որ միևնույն է ոչինչ չի փոխվի և այսպես շարունակ: Հայաստանի Հանրապետությունում թիվ մեկ թշնամին այս մատուցողությունն է, որ մենք չենք կարող, որ մենք հնարավորություն չունենք, որ մենք ավելի լավ է հարմարվենք, որ մենք ավելի լավ է ամբիցիաներ չունենանք: Սա առաջին խնդիրն է, այդ թվում՝ տնտեսության ոլորտում: Սա այն ֆեռմենտն է, որն իր հետևից բերում է աղքատության, հուսահատության, իր հետևից բերում է այն, որ մեր երկրում ընդհանրապես այդ փախեփախի մթնոլորտն է ձևավորվում, որ լավ, մեկ է՝ այստեղ հեռանկար չկա, բայց մի բան եկեք փախցնենք, գնանք մի տեղ յուրա գնանք:

Այս մատուցողությունը փոխելը մեր մեծագույն խնդիրն է և դա արդեն ֆանտաստիկայի ոլորտից չէ, որովհետև քաղաքական մակարդակում մենք սա կարողացել ենք անել, մեզ մնում է այդ գործընթացը շարունակել:

Այսօր աշխարհի առաջատար բոլոր ընկերությունները փնտրում են տաղանդներ, տաղանդներով համակված միջավայր: Երեկ Հարվարդի համալսարանի ուսանողների հետ էի հանդիպում և ասացի, որ մեր ամենաազդեավարական տեսլականը հետևյալն է. Հայաստանի Հանրապետությունը դարձնել դրախտ տաղանդների համար, դարձնել երկիր, որտեղ տաղանդը զարգացնելու, իրացնելու, անսահմանափակ հնարավորություններ կան: Ես հավատում եմ, գիտեմ, հաճոված եմ և տեսնում եմ, որ մենք հասնելու ենք այդ նպատակին, մեզ պետք է հետևողականություն, աշխատասիրություն, համբերություն և, իհարկե, ինտելեկտուալ աշխատանք, որը մենք իրար հետ անպայման կանենք»:

# 2 Գիտություն

## Մեր ՀԱՂԹ-ԱՆԱԿՆԵՐԻ ՄԱՅԻՍԸ

Օրերս հայ ժողովուրդը Հայաստանում և Արցախում արժանապատիվ հպարտությամբ և ցնծությամբ տոնեց մեր հաղթանակների եռատոնը

Դիպված է, պատահականություն՞, թե՞ խորհուրդ երկնային, սակայն այնպես է ստացվել, որ մեր հաղթանակները կայացել են մայիսին: Եվ դա է պատճառը, որ գարնան այդ ամիսը մեզ համար տոնական է, բերկրալի ու ցնծագին, զի հենց մայիսին են երկնվել մեր ժողովրդի ոգու թռիչքը, համազգային սխրանքն ու հանուն հայրենի մաքառելու, հերոսաբար կռվելու և ոսոխին սարսափի մատնելու մեր անկոտրուն կամքը: Եվ մեր գոյության առհավատչյան եղել է ժամանակ առ ժամանակ ժայթքած երկնային թռիչքը, համաժողովրդական սխրանքի այն վեհ պոռթկումը, որի բանաձևը, խորհուրդ խորինը այն գյուտն էր, ապրելու այն հնա-



րը, որ գտնվեց Ավարայրում՝ «Մահ անինաց՝ մահ է, մահ իմացիալ՝ անմահություն»:

Ասում են՝ պարսից հզոր արքան, հերթական ճակատամարտում հանդիպելով հայերի անձնուրաց դիմադրությանը, ասել է. «Հայեր, Աիրիմանը ձեզ տանի, կռվում եք՝ ապրեցեք»:

Եվ մենք, սեղմված հզորագույն և արյունոտ տերությունների արանքում, կռվեցինք՝ հանուն հողի, հավատի, լեզվի, ցեղի, մեր միակ ու սուրբ հայրենիքի: Եվ ապրեցինք, գոյատևեցինք և հասանք 21-րդ դար, որովհետև օրհասական պահին ուժ գտանք բռնուցքվելու, միական ու միասնաբար կռվելու բոլոր այն ոսոխների առեղծվածների դեմ, որոնք դարեր շարունակ ուրծացել են մեզ ոչնչացնելու, հայի անունն ու ազգանունը ջնջելու ճիվաղային մոլուցքը:

Այո՛, մենք սկսեցինք կռվել, զի այդ էր մեր ցեղի, հող հայրենիի գոյատևման, պահպանման միակ հնարն ու նաև՝ սխրանքը:

451 թվական, մայիս... Ավարայրի դաշտում՝ Տղմուտ գետի ափին, անօրինակ սխրանքի փառավոր էջ գրեց հայոց փոքրաթիվ բանակը, որ Վարդանանց գլխավորությամբ օրհասական կռվի էր ելել պարսից ամենակուլ բանակ-խորշակի դեմ: Համազգային, համաժողովրդական նահատակության պատրաստ անօրինակ սխրանք էր դա, ապրելու, գոյատևելու, լեզուն և հավատը չուրանալու միասնական կամք և վճիռ, որ ստիպեց պարսից բռնապետությանը տեղի տալ և զիջել, հրաժարվել հավատն ու լեզուն, ինքնությունն ու լինելիությունն ուրանալու պահանջից:

Ավելի քան 1500 տարի Վարդանը, Վարդանանց հերոսամարտն ու Ավարայրի սխրանքը սերունդներ են կրթել, հային հայ պահել, ազգապահպանության, հերոսության սուրբ օրինակ ծառայել մեզ, և այսօր հանկարծ հայտնվում է մեկը, որն ուզում է ապացուցել, որ չի եղել Ավարայրը, Վարդանանց, համազգային սխրանքը: Չգիտեմ՝ ինչ անուն տան սույն սրբապոծությանը, որ անգամ հակահարված չի ստանում...

Ավարայրը ոչ միայն մեծագույն սխրանք էր, այլև անմոռանալի դաս. ապրելու, գոյատևելու, իր հողի տեր լինելու և հայ մնալու համար պիտի կռվել:

Ցավոք, մենք ուշ-ուշ ենք հիշում այս մեծ դասը, խորհուրդը: Բայց երբ հիշել ենք ու զենք վերցրել, փրկվել ենք ջարդից, կոտորածից, ոչնչացումից: Վկան մեր առասպել դարձած ֆիդայիները, Սասունի, Վանի, Ջեթունի, Մարաշի, Մուսա լեռան հերոսամարտերը, որոնք փրկություն եղան հազար-հազարավոր հայերի համար:

...1918 թվական, մայիս... Մեր դարավոր թշնամին՝ երիցս անիծյալ թուրք մարդասպանը, ներխուժեց փոքրիկ, անօգնական ու թշվառ Հայաստան, որ ավարտին հասցնի իր հրեշավոր ծրագիրը, երկրի երեսից ջնջվերացնի հայի անունն ու վերջին հային: Շատ իրական էր արյունաբերու հրեշի դիվային զարհուրը: Մայիս ամիսն էր, օրհասական և սարսափելի վտանգը կախվել էր մեր մի բուն ժողովրդի վրա: Կորել էր հույսը... Սակայն հայ ժողովուրդը հիշեց իր պատմության դասերը, ապրելու համար պիտի կռվել: Եվ նա դարձավ միաս-



նական, համախմբվեց, դարձավ միասնական մի հզոր բռնուցք և համաժողովրդական կռվի ելավ իր դարավոր թշնամու դեմ: Սարդարապատի, Բաշ Ապարանի, Ղարաբաղի ճակատամարտերում թուրքերը ջախջախիչ պարտություն կրեցին և դիմեցին փախուստի: Եվ նորից ապրեց հայ ցեղը, որովհետև փրկության կռիվ էր մղում:

Այո՛, ճիշտ էր ասել պարսից աշխարհակալ արքան՝

«Հայեր, Աիրիմանը ձեզ տանի, կռվում եք՝ ապրեցեք»: Եվ մենք ապրեցինք, վերածնվեցինք մոխիրներից՝ որպես փյունիկ՝ ի հեճուկս դարավոր թշնամու, նրա գիշատիչ հայացքի առջև...

1945-ի մայիսին եկավ ամենասպասված, ամենաբաղձալի հաղթանակը ֆաշիստական Գերմանիայի դեմ, ավարտվեց մարդկային պատմության ամենադաժան և ամենաարյունահեղ պատերազմը:

Մայիսյան այդ լուսավոր ու մեծ հաղթանակի կրման սուրբ գործում իր արժանի ներդրումն ունեցան հայ ժողովրդի զավակները: Դա նաև մեր հաղթանակն էր, որովհետև փոքրաթիվ հայ ժողովրդի 600.000 զավակներ (նաև սփյուռքից) հերոսաբար կռվում էին երկրորդ



աշխարհամարտի խրամատներում: Հայ ժողովրդի 200 հազար զավակներ հերոսի մահով ընկան մարտի դաշտում:

Հայաստանի անկախացումից հետո մեր երկրի ղեկավարներից ոմանք հայտարարեցին, թե Մեծ հայրենականը մեր պատերազմը չէր, և անոթանք էին շարունակում ռազմի դաշտում հերոսացած և հրաշքով տուն դարձած մեր վետերաններին: Հայրենիքի համար զոհված հայորդիների սուրբ հիշատակը անարգողներին անոթանք տալը ավելորդ զբաղմունք է: Ուղղակի պետք է ստուգել դրանց գեները, և միանշանակ կպարզվի, որ այդ պարոնների երակներով հայի արյուն չի հոսում:

Որովհետև հայ մարդը գիտեր, որ դա նաև մեր պատերազմն էր, որովհետև մենք կռվում էինք անիծյալ թուրքին ժամանակին զորավիգ եղած, Մեծ եղեռնը խրախուսող Թուրքիայի մերձավոր դաշնակցի դեմ: Եղեռնի զոհերի որդիներն ու թոռները, հայ մարդը վրեժ էր լուծում իր անմեղ նահատակների համար:


Մենք գիտեինք նաև, որ ֆաշիստական Գերմանիայի դաշնակցի Թուրքիայի 26 դիվիզիա, սահմանին կանգնած, սպասում էին Ստալինգրադի անկմանը, որպեսզի մտնեն Հայաստան և ավարտին հասցնեն 1915-ին իրագործած հայասպանության իրենց դիվային ծրագիրը: Ճշմարիտ հայի համար Մեծ հայրենականը նաև մեր պատերազմն էր, իսկ մայիսի հաղթանակը՝ մեր հաղթանակը՝ վաստակած և արժանապատիվ:

1992 թվական... Եվ էլի մայիս ամիս: Մայիսի 8-ին փառավոր հաղթանակով ավարտվեց հայրենի Շուշիի գրավման փառահեղ օպերացիան: Շուշին կրկին դարձավ մերը: Եվ այդ հաղթանակի կերտմանն իրենց մասնակցությունը բերին հերոս հայորդիները: Նրանք արցախյան ազատագրական պատերազմի օրհասական օրերին դարձան միակուռ բռնուցք, միասնական, միական հայ ժողովրդի ազատագրական բանակ և զինուժ, որ գիտեին այն մեծ խորհուրդը, որ ապրելու, հայրենիքը պահելու համար մեզ միասնականություն է պետք և ազգովի կռվելու հզոր ոգի:

Այո՛, մենք կռվել գիտենք: Այդ լավ գիտեն մեր դարավոր թշնամին և նրա փոքրիկ թուրք եղբայրը, որոնք հեռվից քստմենտի բորենիների նման ատամ են կրծտացնում և ատելությամբ որոճում սև ու մուր ծրագրեր: Իսկ երբեմն էլ, կարծես ստուգելու և փորձելու համար՝ դիմում ագրեսիայի: Դրա ապացույցն էր ապրիլյան պատերազմը, որը շնորհիվ մեր զինվոր տղաների անձնագոհության և հերոսության, ավարտվեց թշնամու խայտառակ պարտությամբ: Այդ պարտադրված կռիվը խորհրդանշական մի սուրբ խորհրդով՝ նորից հաստատվեց հայ ժողովրդի միասնականության փայլուն ապացույցով: Վտանգի պահին մենք կրկին ու կրկին դարձանք մեկ բռնուցք:

Այո՛, մենք եղել ենք, կանք ու պիտի լինենք, որովհետև պատմությունը մեզ սուրբ դասեր է տվել՝ ապրելու համար պիտի միասնական լինենք և կարողանանք կռվել:

Եվ այդպես էլ պիտի ապրենք՝ կռվելով:



քուն գիտական նոր օջախ ստեղծելու կարևոր գործին:

Բորիս Կարապետյանը ՀՀ ԳԱԱ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ինժեներական մասնակիցներից է և նրա ակունքներին մոտ կանգնած առաջին գիտնականներից մեկը:

1961-1972 թթ. նա ղեկավարել է ՀՀ ԳԱԱ երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտի ինժեներային սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության բաժինը:

Լեւոնյանական քաղաքում աշխատած տարիները եղան նրա կյանքի գիտական, գիտակազմակերպական գործունեության կարևոր և բեղմնավոր տարիները:

Բ. Կ. Կարապետյանը ինստիտուտի ինժեներ, ակադեմիկոս գիտնական ակադեմիկոս Ա. Նազարովի գիտական, գի-

թթակից անդամ է, իսկ 1996 թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

1994-2001 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ երկրի մասին գիտությունների պորբլեմային գիտական խորհրդի նախագահ, ինչպես նաև «Գիտություններ երկրի մասին» տեղեկագրի գլխավոր խմբագիր:

Բ. Կարապետյանը վաստակաշատ գիտնական է, ով արդեն շուրջ յոթ տասնամյակ զբաղվում է կիրառական երկրաշարժագիտությամբ և սեյսմակայուն շինարարությամբ:

Գիտության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում պայթյունների ժամանակ կառույցների և նրանց հիմնատակերի պահվածքի նրա փորձարարական ուսումնասիրությունները, սեյսմիկ շրջանացման և միկրոշրջանացման խնդիրները, ինչպես նաև սեյսմիկ սանդղակների ձևափոխման հետ կապված գի-

մատեղ) և այլն:

Նրա գիտակիրառական հետազոտությունները հրապարակվել են նաև ավելի քան 130 հոդվածներում, գիտական հաղորդագրություններում, թեզերում, միջազգային գիտաժողովների աշխատանքներում, նորմատիվային փաստաթղթերում:

Բորիս Կարապետյանն իր գիտական և գիտակազմակերպական գործունեության մասին ակադեմիկոս Լեւոնյանյանի սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության ժամանակակից ինժեներային գիտության մասնավորապես, փորձարարական խնդիրների լուծմանը, գիտական կարգերի պատրաստմանը: Ղեկավարել է 16 ատենախոսական աշխատանք, այդ թվում՝ 1 դոկտորական:

Ակադեմիկոս Բորիս Կարապետյանն իր բազմաթիվ գիտակազմակերպական գործունեության համար պարգևատրվել է մի շարք շքանշաններով, մեդալներով, մրցանակներով, դիպլոմներով:

Դեռևս 1974 թ.-ին հարկերի բարձրացման մեթոդով կառուցված բազմահարկ շենքերի համալիր մշակման, հետազոտման և ներդրման համար Ա. Գ. Նազարովին և Բ. Կ. Կարապետյանին շնորհվում է Հայկ. ԽՍՀ Պետական մրցանակ՝ գիտության և տեխնիկայի գծով: Ակադեմիկոս Բ. Կարապետյանը ՀՀ ինժեներային սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության խորհրդի նախագահն է, ՀՀ ԳԱԱ ԵԻՍԻ գիտական խորհրդատուն:

Բ. Կարապետյանին բնորոշ է բարձր կուլտուրան և ինտելեկտը, լայն մտահորիզոնը, սթափ միտքն ու սկզբունքայնությունը:

Շնորհավորում ենք ակադեմիկոս Բորիս Կարապետյանին Կարապետյանին ծննդյան 95-ամյակի առթիվ, ցանկանում առողջություն և այսուհետև ևս արգասավոր գիտական գործունեություն:

**ՀՀ ԳԱԱ քիմիական և երկրի մասին գիտությունների բաժանմունք,**

**ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվան երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ**

## Բորիս Կարապետի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ (ծննդյան 95 ամյակին)

Լրացավ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բազմակատակ գիտնական Բորիս Կարապետի Կարապետյանի 95-ամյակը:

Բ. Կ. Կարապետյանը ծնվել է ՌԴ Ստավրոպոլի մարզի Պյատիգորսկ քաղաքում 1924 թ.-ին: 1926 թվականին ընտանիքը տեղափոխվում է Երևան: 1948 թվականին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի «Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն» բաժինն ավարտելուց հետո՝ ստանալով ճարտարագետ-շինարարի մասնագիտություն, Կարապետյանն աշխատանքի է անցնում ՀՀ քաղաքաշինության նախարարության շինարարության և ճարտարապետության հայկական գիտահետազոտական ինստիտուտում՝ զբաղեցնելով լաբորանտից մինչև բաժնի վարիչի պաշտոնները:

1961 թ.-ին նա տեղափոխվում է Լեւոնյանական (այժմ՝ Գյումրի) և ծեռնամուխ լինում հանրապետության երկրորդ քաղա-

տակազմակերպչական ավանդույթների արժանի հետևորդն ու շարունակողն է:

1954 թ.-ին նա պաշտպանում է իր թեկնածուական, իսկ 1964 թ.-ին՝ դոկտորական թեզերը: 1970 թ.-ին նրան շնորհվում է պրոֆեսորի գիտական կոչում:

1972-1974 թթ. դասավանդում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում: 1974-1980 թթ. զբաղեցնում է ՀՀ քաղաքաշինության նախարարության շինարարության և ճարտարապետության հայկական գիտահետազոտական ինստիտուտի փոխտնօրենի պաշտոնը:

1980-1994 թթ. Բորիս Կարապետյանը եղել է ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանի երկաթբետոնե, քարե կառույցների սեյսմակայունություն ամբիոնի, իսկ ամբիոնների վերամիավորումից հետո՝ մինչև 2011 թ.-ը՝ շինարարական կոնստրուկցիաներ ամբիոնի վարիչ:

Բ. Կ. Կարապետյանը 1990 թ.-ից ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի

տական և կիրառական հարցերը:

Նրա նախաձեռնությամբ և նվիրված ջանքերի շնորհիվ Լեւոնյանական քաղաքում ստեղծվեց ինժեներասեյսմաչափական կայանների ցանցը, որը լայն հնարավորություն ստեղծեց ուսումնասիրել տարբեր կոնստրուկտիվ համակարգերի կառույցների պահվածքը երկրաշարժերի ժամանակ:

Բ. Կարապետյանի կարևոր գիտական և կիրառական հետազոտությունների արդյունքները տեղ են գտել նրա բազմաթիվ սենագրություններում՝ «Բազմաճյուղային սեյսմոմետրերը և նրանց կիրառությունը ինժեներային սեյսմաբանությունում», «Հայաստանում կառուցված շենքերի տատանումները», «Սեյսմիկ ազդեցությունը շենքերի և կառույցների վրա» (Վ. Ա. Բիխովսկու և Ս. Վ. Մեդվեդևի հետ համատեղ), «Երկրաշարժերի կանխագնահատման նախադրյալները և սեյսմակայուն շինարարությունը Հայկ. ԽՍՀ-ում» (Ն. Կ. Կարապետյանի հետ հա-

## «Սևանա լիճ. ներկա վիճակը, ընթացիկ հետազոտության արդյունքները և հետագա հետազոտության կարիքները» թեմայով միջազգային աշխատաժողով ԸԸ ԳԱԱ-ում



Սույն թվականի ապրիլի 29-ին ՀՀ ԳԱԱ-ում անցկացվեց «Սևանա լիճ. ներկա վիճակը, ընթացիկ հետազոտության արդյունքները և հետագա հետազոտության կարիքները» թեմայով միջազգային աշխատաժողով:

Հայ և գերմանացի մասնագետները ներկայացրեցին «SevaMod» ծրագրի Սևանա լճի բնական պաշարների կայուն կառավարման և օգտագործման համար ստեղծվող մոդելի առաջին փուլի արդյունքները, քննարկեցին ծրագրի հետագա շարունակման հնարավորությունները:

Աշխատաժողովը բացեց Գերմանիայի Մագդեբուրգի Շրջակա միջավայրի հե-

տազոտության Հելմհոլցի կենտրոնի լճային հետազոտությունների բաժնի գիտնական Մարտին Շուլցեն, ով ներկայացրեց ծրագրի նպատակները, գործընկերներին և աջակիցներին:

Սևանա լիճն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող ամենաբարձրադիր լճերից մեկն է: Սակավաջուր մեր երկրի կյանքում մեծ է Սևանի նշանակությունը: Նրա հետազոտությունները կարևոր նշանակություն կունենան էկոհամակարգի բարելավման համար, նշեցին աշխատաժողովի մասնակիցները:

Աշխատաժողովի ընթացքում ներկայացվեցին «Սևանա լճի էկոլոգիան», «Սևանա լճի ավազանում հիդրոկլիմայա-

կան բնութագրերի փոփոխությունները», «Ֆոսֆորը Սևանա լճի հատակային նստվածքներում», «Սևանա լճի այծմյա և հետագա ստրատիֆիկացիայի մոդելավորում» և այլ գեկուցումներ:

Աշխատաժողովին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ փոխնախագահ ակադեմիկոս Յուրի Շուբուրյանը, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նախագահ Յուրի Ջավադյանը, ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրեն Բարդուխ Գաբրիելյանը, ՀՀ վարչապետի գլխավոր խորհրդական Արամ Դարիբյանը, ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ Այսեր Ղազարյա-

նը, Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքի Շրջակա միջավայրի հետազոտության Հելմհոլցի կենտրոնի լճային հետազոտությունների բաժնի ղեկավար Կ. Ռինկեն, ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության Ջրային կոմիտեի նախագահ Վարդան Մելքոնյանը, ՀՀ ԳԱԱ գիտահետազոտական կառույցների ղեկավարներ, գիտնականներ Հայաստանից, Գերմանիայից, Ռուսաստանից, ՀՀ պետական պատասխանատու մարմինների ներկայացուցիչներ:

Աշխատաժողովը կազմակերպել էին ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնը, Գերմանիայի Մագդեբուրգ քաղաքի Շրջակա միջավայրի հետազոտության Հելմհոլցի կենտրոնը (UFZ) և ՀՀ բնապահպանության նախարարության շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոնը: Աշխատաժողովն անցկացվեց Գերմանիայի կրթության և հետազոտության դաշնային նախարարության (BMBF) կողմից ֆինանսավորվող «Սևանա լճի մոդելի մշակում նրա էկոլոգիայի ավելի լավ ըմբռնման համար և որպես նրա բնական պաշարների կայուն կառավարման և օգտագործման գործիք» թեմայով գիտահետազոտական ծրագրի շրջանակներում:

**ՀՀ ԳԱԱ տեղեկատվական-վերլուծական ծառայություն**



Ապրիլի 18-ին Մոսկովայի Կիևյան փողոցում գտնվող «Vnukovo Village Park Hotel & Spa 4\*» բարձրակարգ և շքեղ բանկետային համալիրի նույն-քան շքեղ «Surikov hall» դահլիճում հանդիսավորությամբ նշվեց 20-րդ դարի ամենագաղտնի մարդկանցից մեկի՝ հայազգի ասկանավոր գիտնական, ԽՍՀՄ միջուկային կենտրոնի գլխավոր կոնստրուկտոր, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հե-րոս, Լենինյան մրցանակի, երեք

վառից, «ՌԴ վաստակավոր շինարար» կոչման դափնեկիր, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանում հայտնի գործարար, բարե-րար և հասարակական գործիչ Սուրեն Ներսեսի Նաջարյանը, ով մեկ անգամ չէ, որ սիրահո-ժար հովանավորել է հայազգի նշանավոր մարդկանց մեծա-րանքի և հիշատակի միջոցա-ռումները:

Միջոցառմանն իր ելույթում ՌԴ-ում ՀՀ դեսպան Վարդան Տո-

Սամվել Քոչարյանցը, ով վե-ցերորդ երեխան էր ընտանիքում, ծնվել է 1909 թ. Նոր Բայազետում (Գավառ): Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել և ուսանել է Երևանի պետական համալսա-րանում, սակայն նրան հեռացրել են գրադարության հետևանքով, և 1930 թ. Քոչարյանցը ստիպ-ված է եղել մեկնել Մոսկվա: Երեք տարի աշխատել է գործարա-նում, որը չուներ ամուսն և միայն 24 համարն էր կրում, որից կա-րելի էր եզրակացնել, որ դրա

այս գիտական քաղաքը: Նա դարձել է Խորհրդային Միության ամենագաղտնի մարդկանցից մեկը: 1959 թ. Քոչարյանցի գլխավորությամբ ստեղծվել է Կոնստրուկտորական բյուրո, որը նա ղեկավարել է երեք տաս-նամյակ: Գիտնականի ղեկավա-րությամբ ստեղծվել են միջուկա-յին ռուներներ, պայթուցիկներ, ռազմական հրթիռների գլխիկ-ներ և այլն: Ծնորհիվ իր եզակի գաղափարների և հսկայածավալ աշխատանքի՝ ստեղծվեցին մի-ջուկային զենքի մի քանի սե-

ներքո: Նա շատ մտահոգված էր դարաբաղյան հակամարտութ-յան հարցով. նախնիները Ղարա-բաղի մեկիցներ են եղել:

1985 թ. Ամենայն Հայոց կա-թողիկոս Վազգեն Առաքինի հրա-վերով Քոչարյանցը ժամանել է Ս. Էջմիածին, որտեղ տեղի է ու-նեցել ջերմ ընդունելություն: Վազգեն Առաքինը գիտնականին է նվիրել իր դիմանկարը, անվան առաջին տառերով թաշկինակը և հայոց այբուբենի փորագրությու-նը: Քոչարյանցը պահել է սրբա-զան նվերները, կաթողիկոսի դի-մանկարը միշտ կախված է եղել գլխավերևում, իսկ այբուբենի փորագրությունը՝ նրա գրասեն-յակի պատին:

Սամվել Քոչարյանցը կյան-քից հեռացել է 1993 թ. օգոստոսի 4-ին և թաղվել է Սարովում:

1993 թ. սեպտեմբերյան հա-մարում «Օգոստոս» ամսագիրը «Մեծ կոնստրուկտորի զաղտնի մահը» մահախոսականում գու-ժում էր, որ մահացել է 20-րդ դարի ամենագաղտնի մարդկա-նից մեկը՝ Սամվել Գրիգորի Քո-չարյանցը: Այս ամուսնը լսել էին ֆիզիկոսներն ու հրթիռագետնե-րը, պետության բարձրագույն ղեկավարությունն ու ԿՀՎ աշ-խատակիցները, սակայն քչերը գիտեին, թե որտեղ է նա ապ-րում, ինչ է մտածում, որտեղ է լի-նում: Նրա անձնագրում նշված էր, որ բնակվում է Մոսկվայում, սակայն հասցեն կեղծ էր՝ ոչ փո-ղոցը, ոչ տունը իրականում գո-յություն չուներին: Սակայն, անձ-նագրում հատուկ նշան կար, ըստ որի ոստիկանության աշ-խատակիցներն անձնագրի սե-փականատիրոջ հետ կարող էին համագործակցել և ամենա-բարձր հարգանքը ցուցաբերել վերջինիս հանդեպ:

Իր անչափ բովանդակալից կյանքը լայն հանրության համար անկատար ասարած մեր նշանա-վոր հայրենակցի մասին մեծա-գույն հարգանքով են խոսել ոչ միայն «անձամբ ընկեր Ստալի-նը», այլև տվյալ ժամանակաշո-ջանում աշխարհի շատ մեծեր և անգամ Խորհրդային Միություն-Ամերիկա սառը պատերազմի տարիներին՝ ԱՄՆ Կենտրոնա-կան հետախուզական վարչութ-յան երևելի ղեմերը:

Սամվել Քոչարյանցի մասին դեռ շատ ստեղծագործություն-ներ կգրվեն, և ես հավատում եմ, որ կգա այն օրը, երբ ամբողջո-վին կզաղտնագերծվեն այդ ա-ռեղծվածային մարդու կյանքի բոլոր մութ, սակայն սերունդնե-րի համար լուսավոր և հերոսա-կան էջերը:

Գոհար ԲՈՏՈՅԱՆ

## ՆՇԱՆԱԿՈՐ ՀԱՅԵՐ

# ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԶԻՆԱՆՈՑԻ «ՀԱՅՐԸ»

Մոսկվայում նշվեց 20-րդ դարի ամենագաղտնի մարդկանցից մեկի՝ Սամվել Քոչարյանցի ծննդյան 110-ամյակը



Ստալինյան մրցանակների, ԽՍՀՄ Պետական մրցանակի դափնեկիր, ՌԽՖՍՀ գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, Լենինի 6 շքանշանների և Հոկտեմբերյան հեղափոխութ-յան շքանշանի ասպետ, Ռուսաս-տանի Սարով և Հայաստանի Նոր Բայազետ (այժմ՝ Գավառ) քաղաքների պատվավոր քաղա-քացի, տեխնիկական գիտութ-յունների դոկտոր, պրոֆե-սոր Սամվել Գրիգորի Քոչարյան-ցի ծննդյան 110-ամյակը:

Միջոցառմանը մասնակցում էին ՌԴ-ում ՀՀ դեսպան Վարդան Տոդանյանը, ՌԴ հասարակա-կան, քաղաքական և ռազմական գործիչներ, պատվիրակություն-ներ ԽՍՀՄ տարիներին գեր-գաղտնի համարվող Արզամաս-16 գիտավանդից (այժմ՝ Նիժնի Նովոգորոդի մարզի Սարով քա-ղաք), հայրենի Գավառից, Սամ-վել Քոչարյանցի որդին, թոռնու-հին, հյուրեր և լրագրողներ՝ Հա-յաստանից ու Ռուսաստանից:

Հավուր պատշաճի և բարձր մակարդակով կազմակերպված մեծարանքի և գնահատանքի հուշ-երեկոն, ինչպես նաև միջո-ցառման ընթացքում ներկայաց-ված էմանուել Դոլբախյանի «Ա-մենագաղտնի Կ-ն» Սամվել Քո-չարյանց» գրքի տպագրությունը հովանավորել էր ծնունդով Գա-

ղանյանը, որն, ի դեպ, բաց չի թողնում Ռուսաստանում կազ-մակերպված ոչ մի «հայկական» միջոցառում և իր պարտաճանաչ աշխատանքով հասցրել է ձեռք բերել իր հազարավոր հայրենա-կիցների հարգանքն ու վստա-հությունը, հիացմունքի և հպար-տության խոսքերով անդրադառ-նալով Սամվել Քոչարյանց մե-ծանուն հայի ու գիտնականի անցած ուղուն և գործունեությա-նը՝ բարձր գնահատեց նաև նման հիշատակի երեկոներ կազմա-կերպելու և լայն հանրությանը մեր մեծերին ծանաչելի դարձնե-լու փաստն ու այդ կապակցութ-յամբ շնորհակալություն հայտ-նեց երեկոյի հովանավոր Սուրեն Նաջարյանին:

- Քյավառը՝ իմ հայրենի Գա-վառը, գիտնականներ շատ է տվել ոչ միայն Հայաստանին, այլև ամբողջ աշխարհին,- իր ե-լույթում նշեց Սուրեն Ներսեսի Նաջարյանը: Այդ աստղաբույլում կա վառ շողացող մի աստղ՝ Սամվել Քոչարյանցը, հզոր մի մարդ, որի հեղինակած «աշ-խարհակործան» գյուտերը սթա-փեցրել են երկրագնդի գերտե-րություններին, և ես հպարտ եմ, որ ծնվել եմ այդ նշանավոր հա-յի ծննդավայրում, նույն քաղա-քում, և խոնարհվում եմ նրա հի-շատակի առաջ:




արտադրությունն ամենևին սպառնողական չէր: Այդ տարիներ-ը, հավանաբար, դարձան նրա ապագա գաղտնի կյանքի սկիզ-բը:

Այնուհետև նա չորս տարի սովորել է Մոսկվայի էներգետիկ ինստիտուտում, ավարտել է աս-պիրանտուրան՝ զուգահեռ դա-սավանդելով տեսական էլեկտ-րատեխնիկայի ամբիոնում, և պատերազմի առաջին ամռանը պաշտպանել է իր թեկնածուա-կան ատենախոսությունը: Քո-չարյանցը կարող էր դասախոս դառնալ և ոչ թե «պետական գաղտնիք», բայց նրա համար այլ ճակատագիր էր սահման-ված: Երիտասարդ գիտնականի կտրուկ շրջադարձը կյանքում վրա հասավ 1947 թ. սեպտեմբե-րին, երբ երկրում ծայրաստիճան գաղտնիության պայմաններում սկսվեցին միջուկային ծրագրի շուրջ աշխատանքները: Խիտ անտառում գտնվող Սարով փոք-րիկ գյուղում տեղակայվել էր ԽՍՀՄ ամենագաղտնի օբյեկտը՝ միջուկային կենտրոնը: Գյուղը բացակայում էր բոլոր քարտեզ-ներում: Տարբեր տարիների փաստաթղթերում այն կոչվել է տարբեր կերպ: Ամենից շատ հայտնի է եղել որպես «Արզա-մաս-16»: Քոչարյանցը գրեթե կես դար ապրել և կառուցել է

րունդներ, որոնք հիմք դարձան ԽՍՀՄ միջուկային ողջ զինանո-ցի համար: Քոչարյանցը մեկն է այն մարդկանցից, ովքեր Խորի-դային Միությունը մեծ ատոմա-յին տեղություն դարձրեցին: Նրա շնորհիվ հնարավոր դարձավ շատ արագ կիսել ԱՄՆ-ի միջու-կային մեծաշնորհը: Խորհրդային Միությունում ընդամենը 205 հո-գու է շնորհվել Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոսի տիտղոս: Նրանցից միայն 57 հո-գի են ստացել այն գիտության և տեխնոլոգիաների ոլորտում, և նրանց մեջ են մեր երեք հայրե-նակիցները՝ Արտեմ Միկոյանը, Վիկտոր Համբարձումյանն ու Սամվել Քոչարյանցը:

Քոչարյանցը կյանքի ընթաց-քում միայն մեկ անգամ է կրել իր բոլոր պարգևները, երբ եկել է Հայաստան՝ հայրենի Գավառ: Եվ երբ նա հանել է վերարկուն, բո-լորը ապշահար են եղել. Հայաս-տանում ոչ ոք չի էլ իմացել, որ ի-րենց հայրենակիցն այդքան ար-ժանավոր մարդ է եղել: Քոչար-յանցը երբեք չի մոռացել Հայաս-տանը: Առաջին իսկ հնարավո-րության դեպքում, թեկուզ կարճ ժամանակով, փորձել է գալ հայ-րենիք, թեև նրա յուրաքանչյուր քայլը մշտապես եղել է անվ-տանգության ծառայողների ու-ղեկցությամբ ու հսկողությամբ

## ՆՈՐ ԲԱՑՎԱԾ ԷՋ



# ԽԱՉԱՏՈՒՐ ԱՐՈՎԱՅԱՆԸ ՕՂԵՐԵՎՈՒԹԱՔԱՆ

Խաչատուր Աբովյանը հայ ժողովրդի համճարեղ այն լուսավորիչներից էր, ով ասպարեզ եկավ պատմականորեն ամե-նադժվարին ժամանակներում: Խորապես գիտակցելով ստեղծված ծանր վիճակը և սպասվող մարտահրավերները Աբովյանը կարողացավ անել անկարելի և ամբող-ջությամբ նվիրվեց հայ ժողովրդի փրկության վեհ և սուրբ գործին:

Նա ոչ միայն համճարեղ մտավորա-կան էր, այլ նաև մեծ փիլիսոփա, լեզվա-բան և հասարակական ակտիվ գործիչ: Անգնահատելի է նրա ծանրակշիռ ավան-դը հայ ժողովրդին պատուհասած դժվա-րին ժամանակներում: Խ. Աբովյանը տնից դուրս եկավ և չվերադարձավ: Բազում

ծրագրեր մնացին անավարտ: Խ. Աբովյա-նի գործն անմահ է:

Ներկայումս քչերը գիտեն, որ հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը անմի-ջական առնչություն ունի Երևանում օ-ղերևութաբանական չափումների իրա-կանացման գործում: 1844 թվականին Դորպատի համալսարանի երկրաբա-նության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Հեր-ման Աբիխը ծանոթացել էր Խաչատուր Ա-բովյանի հետ և նրան մասնակից դարձ-րել իր գիտարշավին: Ի դեպ, Հ. Աբիխը հսկայական ծառայություններ ունի Անդր-կովկասի երկրաբանական կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում: Նրա խնդրանքով Խ. Աբովյանը Երևանի գա-

վառական ուսումնարանում 1844-1845 թվականների ընթացքում կազմակերպել է օղերևութաբանական դիտարկումներ: Կատարվել են օղերևութաբանական, ծանրաչափական, ջերմաչափական և խոնավաչափական դիտարկումներ: Այս տարի լրանում է այս պատմական իրո-դության 175 ամյակը: Կարծում եմ կարող եմ նշել այս հոբելյանը պատշաճ մակար-դակով:

**Ստեփան ՊԱՊԻԿՅԱՆ**  
**Հայկական էներգետիկական**  
**ակադեմիայի հիմնադիր նախագահ,**  
**տեխնիկական գիտությունների**  
**թեկնածու**





# ՄԵԾԱՆՈՒՆ ԱՐԵՎԵԼԱԳԵՏԻ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԱՎԵՐԱԹՂԹԵՐԻ ԸԱՐՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Մեծանուն արևելագետ Նիկոլայ Յովհաննիսյանի «Մերձավոր Արևելքի և արևելասիական քաղաքական հորձանուտում» գիրքը վերլուծական փաստաթղթերի ժողովածու է՝ ներկայացված խորհրդային Միության ղեկավարությամբ: Այն հրատարակվել է ռամկավար լիբերալ դեմոկրատական կուսակցության նախաձեռնությամբ: Գրքում գետնված բոլոր նյութերը, բնականաբար, ռուսերեն են և տպագրվում են առաջին անգամ:

Դիպուկ է գրքի ենթախորագիրը՝ «Արևելագետի նոթագրություններ»:

Համաշխարհային պատմագրության մեջ մեծագույն արժեք են փաստաթղթերը՝ առանց որոնց անհնար է պատկերացնել մարդկության պատմության ճշգրիտ ընթացքը: Հատկապես կարևոր են բնագրային, սկզբնաղբյուրային, անխաբար, ժամանակակցի և պատմական իրադարձությունների ականատեսի, մասնակցի իրական փաստաթղթերը:

Ահա այսօր այդ եզակի շնորհակալ գիրքն է դրված հանրության սեղանին, և դրա հեղինակը միջազգային հեղինակություն ունեցող արաբագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Նիկոլայ Յովհաննիսյանն է, որի գիտական, քաղաքական դիմանկարը ընթերցողին ներկայացնում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը:

19-րդ դարում ֆրանսիացի նշանավոր հայագետ Վիկտոր Լանգլուան Կիլիկյան Հայաստանի քաղաքական, պետական դերն ու նրա միջազգային նշանակությունը հանրությանը ներկայացնելու համար այցելեց Եվրոպական գրադարանների արխիվները՝ փաստաթղթեր գտնելու ու կարողացավ միայն դրանց մի փոքր մասը հայտնաբերել ու հրատարակել՝ լրջագույն ծառայություն մատուցելով միջազգային հայագիտությանը:

Ն. Յովհաննիսյանի վավերագրային գիրքը կարևոր է այսօրվա, վաղվա և գալիք սերունդների համար՝ ճշգրիտ ու անկողմնակալ պատկերացում ունենալու Մերձավոր Արևելքի, Արևելասիական երկրների հետ XX դարի երկրորդ կեսին գերտերության՝ խորհրդային Միության, դիվանագիտական հարաբերությունների և դրանք կարգավորող անձանց մասին: Խիստ ուշագրավ է գրքի սկզբում՝ առանձին էջի վրա, գրված հետևյալ փաստաթուղթը. «Լիբանանում խորհրդային Միության արտակարգ և լիազոր դեսպան Ալեքսանդր Ալեքսեևիչ Սուլդատովին: Հարգելի դեսպան: Պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսյանի նյութերն ուղարկեցեք այն տեսքով, ինչպես նա դրանք ներկայացնում է՝ առանց խմբագրական միջամտությունների կամ հավելումների»:

Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության Կենտկոմի քաղքուրոյի հրահանգից:

Այս հրահանգն արդեն պերճախոս վկայում է, թե գերտերության արևելյան դիվանագիտական խնդիրներում որքան կարևորվել է պրոֆեսոր Նիկոլայ Յովհաննիսյանի ավանդը:

Մեր օրերի միջազգային արաբագիտության մեջ Նիկոլայ Յովհաննիսյանն անվերապահ հեղինակություն է: Նրա աշխատասիրությունները մոր մակարդակի են բարձրացրել արաբագիտությունն ու ցեղասպանագիտությունը: Գիտնականի արևելագիտական փաստաթղթերն ու նոթագրությունները վերաբերում են մեծ շառավիղ ընդգրկող երկրների՝ Լիբանան, Սիրիա, Իրան,

Գիտնականն անձնապես բանակցություններ է վարել Պաղեստինի ազատագրական կազմակերպության նախագահ Յասիր Արաֆաթի, Իրանի առաջնորդ Այաթոլա Խոմենյուի, Լիբանանի պառլամենտի նախագահ Հուսեյն Հուսեյնի, բազմաթիվ այլ ղեկավարների ու դիվանագետների հետ:

Գիրքը բացվում է 1975-1990 թթ. Լիբանանում ԽՍՀՄ դեսպան Սուլդատովի հետ վարած զրույցի սղագրությամբ: Պարզ պատկերացում ենք կազմում, թե Լիբանանի քաղաքացիական կռիվների ժամանակ ինչ կորուստներ են կրել այդ երկրում ապրող հայերը, և ինչու նրանք բռնել են չեզոք դիրք: Խորհրդային Հայաստանից Լիբանան մեկնած պատվիրակությունն օգնել է Բեյրութի հայ հա-

րենիքի հետ կապելու բազմաթիվ կետերից բաղկացած ծրագիր և պահանջել, որ 1983-ին Երևանում հրավիրի սփյուռքահայության ու Հայաստանի ներկայացուցիչների վեհաժողով:

Գիտնականի նոթագրության առանձնահատկություններից մեկը հստակ մտածողությունն է ու դիպուկ խոսքը, որն այնքան կարևոր է դիվանագիտության մեջ:

Գուցե շատերը չգիտեն, թե երբ ստեղծվեց Իսրայել պետությունը, և ինչպես սկիզբ առան իսրայելապաղեստինյան հակամարտությունները, որոնք, ցավոք, առ այսօր շարունակվում են: Գիրքը դա բացատրում է:

1947 թ. նոյեմբերի 29-ին Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեան (ընդհանուր ժողով) Բրիտանիայի ենթամանդատության տակ գտնվող տարածքը բաժանեց՝ ստեղծելով երկու պետություն՝ հրեաների և արաբների: Արաբական պետությունները դեմ էին այդ որոշմանը՝ այսինքն հրեաների պետականության վերականգնմանը, և արաբական հինգ երկրներ պատերազմ սկսեցին նորաստեղծ հրեական պետության դեմ: Սակայն նրանք պարտվեցին, և Պաղեստինի տարածքի երկու երրորդն անցավ Իսրայել պետությանը: Գիտնականը շարունակում է այս կոնֆլիկտի հետագա ընթացքի համառոտ շարադրանքը:

Նոթերից իմանում ենք, որ 1985-ին Ն. Յովհաննիսյանը խորհրդային Միության գիտությունների ակադեմիայի և Սիրիայի Արաբական Հանրապետության համաձայնագրի հիման վրա մեկնում է Դամասկոս, հետազոտական աշխատանք կատարում Հալեպի և Դամասկոսի համալսարաններում ու գրադարաններում և որպես հաճելի անակնկալ իմանում, թե ինչպես խորհրդային Միության բուհերում սովորած որոշ մասնագետներ ծանոթ են նրա աշխատություններին:

Գրքում կան դիվանագետների կյանքի որոշ վտանգավոր իրողությունների հետ կապված փաստեր, երբ դիվանագետներին պատանդ են վերցնում, և նրանց մեջ լինում են զոհեր:

Նոթագրության մեջ նկարագրված պետական նշանավոր դեմքերից են ԱՄՆ-ի նախագահ Ռոնալդ Ռեյգանը և Անգլիայի վարչապետ Մարգարետ Թեչերը՝ ԽՍՀՄ-ում պերեստրոյկայի հետ կապված իրադարձությունների տեսադաշտում:

Ամսօրը է գրքի «Անդրեյ Դմիտրիևի Սախարովը Երևանում, Արցախում, Սպիտակում» հատվածը:


Գիտնականը եղել է այդ կարևոր հյուրերի կողքին ու մամուլամասում է նրանց քաղաքական հատուկ նշանակություն ունեցող ազդեցությունը, որը լայն արձագանք գտավ:

Խիստ տպավորիչ է գրքի վերջում տպագրված Ն. Յովհաննիսյանի հիմնական մենագրությունների ցանկը, որը հաստատում է գիտնականի միջազգային արևելագիտության մեջ ունեցած ներդրումը: Դրանք 91 աշխատություններ են՝ լույս տեսած հայերենով, ռուսերենով, արաբերենով, գերմաներենով, ֆրանսերենով, թուրքերենով, ճապոներենով, հունգարերենով, պարսկերենով, իտալերենով, կորեերենով ու ռումիներենով:

Այս գրքով ընթերցողն իր համար հայտնաբերում է Արևելյան երկրների քաղաքական դաշտի բոլորովին անհայտ պատկեր, որում հայ մտավորականն ունեցել է իր որոշիչ դերը:

Նիկոլայ Յովհաննիսյանի գիրքն ունի պատմական, ճանաչողական, դիվանագիտական մեծ արժեք և հանձնարարելի է ապագա արևելագետներին, քաղաքագետներին ու միջազգայնագետներին:

ՍԵԼԻՏԱ ԴՈԼՈՒՍԱՆՅԱՆ  
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



Հորդանան, Եգիպտոս, Իսրայել, Չինաստան, Ճապոնիա: Գիտնականն իր մասնակցությունն է բերել ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և *հատկապես* Լեռնային Ղարաբաղի հետ կապող խորհրդային Միության բանակցություններին: Տարբեր երկրներում եղել է պետական, կառավարական պատգամավորների խմբում կամ մասնակցել միջազգային գիտաժողովների:

Նիկոլայ Յովհաննիսյանը փայլուն տիրապետում է ոչ միայն մայրենի լեզվին, այլև ռուսերենին, անգլերենին, արաբերենին և օգտվում այլ լեզուներից: Սրանք նախապայմաններ են գիտնականի հեղինակությունն ու խոսքը միջազգային բանակցությունների ժամանակ որոշիչ ու ազդեցիկ դարձնելու համար: Գրքի վերջում առկա են բազմաթիվ լուսանկարներ, որոնցում նրա կողքին կանգնած են տարբեր երկրների առաջին դեմքեր, քաղաքական գործիչներ, նշանավոր գիտնականներ:

Գիրքը բացվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի «Մուտքի» խոսքով, որում համառոտ ներկայացվում են գիտնականի կենսագրության հիշարժան դրվագներն ու պարզվում: Տեղին է դրանց մի մասը ներկայացնելը՝

1. 2004-ին՝ տարվա միջազգային գիտնական
2. 2004-ին՝ XXI դարի նշանավոր գիտնական
3. 2005-ին՝ աշխարհի առաջատար գիտնական
4. 2009-ին՝ Ն. Յովհաննիսյանն ընդգրկվել է աշխարհի 100 ամենանշանավոր գիտնականների ցուցակում
5. 2009-ին՝ Քեմբրիջի Միջազգային կենսագրական կենտրոնը գիտական ձեռքբերումների համար նրան արժանացրել է «Էյնշտեյնի միջազգային մրցանակի»

մայրենի քաղաքական ծանր պայմաններում ճիշտ վարքագիծ ունենալու: Ըստ գրքի նյութերի՝ վավերագրական ֆիլմի նման ընթերցողի աչքի առաջ անցնում են այն ծանր դեպքերը, որոնց միջով անցել է հայ համայնքը Լիբանանի քաղաքացիական պատերազմի ծանր տարիներին:

1979 թ. սեպտեմբերի 25-ին դոկտոր Ն. Յովհաննիսյանը Բեյրութի խորհրդային Միության մշակութային կենտրոնում զեկուցում է կարդացել «Խորհրդային արաբագիտության հիմնական միտումների զարգացման մասին» թեմայով: Ձեկուցումը լսվել է լեվ-լեցուն դահլիճում և ունեցել ներգործում տպավորություն:

Անչափ հետաքրքիր է 1980-ի հոկտեմբերի 26-31-ին Երևանում ճապոնիայի պատգամավորական խմբի անդամ պարոն Նակագավայի հետ ունեցած զրույցը, որից պարզ է դառնում, թե ինչու ճապոնիայի կառավարությունը չի ընդունում խորհրդային Միության քաղաքական որոշ քայլեր: Դրանք են՝ ա) խորհրդային զորքերի ներխուժումը Ադվանստան, բ) խորհրդային Միության հրաժարվելը ճապոնիայի հյուսիսում գտնվող չորս կղզիներն իրենց վերադարձնելը, գ) Վիետնամի քաղաքականությունը և նրա մոր դերը:

Խոսք է գնացել խորհրդային և ճապոնական տնտեսական հարաբերությունների, Սաո Ցգե Դուինի հետ ճապոնիայի և Չինաստանի մոր հարաբերությունների և ամենակարևորը՝ Արևմտահայաստանի ու խորհրդային ու թուրքական հարաբերությունների մասին: Գիտաժողովի միաստեղծ մեկի ժամանակ ճապոնացի պրոֆեսոր Խիորամի Տեյաթիքանի հայտարարել է. «... ինչպես հարթուրեական հարաբերությունները երբեք չեն դառնա լավ ու նորմալ, մինչև Արարատ լեռը չվերադարձվի Հայաստանին, այնպես էլ խորհրդային-ճապոնական հարաբերությունները երբեք չեն լինի բարեկամական, մինչև ԽՍՀՄ-ը ճապոնիային չվերադարձնի «Կյուսիսային տարածքները», այսինքն՝ չորս կղզիները» (էջ 52):

Պարոն Նակագավան հանկարծ դիմել է Ն. Յովհաննիսյանին և կամեցել իմանալ հայոց ցեղասպանության հիմնական պատճառը: Գիտնականը հիմնովին բացատրել է երիտթուրքական դահլիճների իրագործած ոճիրները և գոհացրել ճապոնացուն:

Նոթագրությունից պարզ է դառնում, թե ինչ ազգասիրական ջանքեր է գործադրել արևելագետ սփյուռքահայության նկատմամբ խորհրդային Միության ղեկավարության ուշադրությունը ճիշտ նպատակաուղղելու առումով: Նա առաջ է քաշել սփյուռքահայությանը հայ-

## ՀՈՎՀԱՍՏԵԱ ԹՈՒՄԱՆՅԱՆ-150



Կոնստանտին Բալմոնտ

Կ. ԲԱԼՄՈՆՏ.

## «ՔԵՂ ԵՐԿԱՐ ԿՅԱՆՔ, ԼՈՒՅՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ»

Համարյա ողջ աշխարհը ոտքի տակ տված ռուս նշանավոր բանաստեղծ Կոնստանտին Բալմոնտը (1867–1942) Ռուսաստանի մի շարք քաղաքներում կարդացած դասախոսություններից հետո 1914 թ. ապրիլի 10-ին ժամանում է Թիֆլիս: Ամենայն հավանականությամբ, այդ ժամանակներում նա արդեն մտադրվել էր թարգմանել Շոթա Ռուսթավելու «Ընծեմավորը» և այդ նպատակով էլ «Վրաց մեջ գրագիտություն տարածող ընկերությունը» նրան է նվիրել պոեմի պատկերազարդ հրատարակությունը: Բալմոնտի պատվին վրաց հասարակայնությունը կազմակերպում է ճաշկերույթ, որին հրավիրվում է նաև Յովհ. Թումանյանը: Այդ օրն էլ նրանք ծանոթանում են, երկար զրուցում: Դրանից առաջ՝ 1890-ական թվականներին, Կ. Բալմոնտը ռուս առաջին բանաստեղծն է եղել, որ թարգմանել է Թումանյանի գործերից «Ախթամար» լեզենդը և «Համերգ» բանաստեղծությունը: Դրանք լայն ընդունելություն են գտել ռուսական և հայկական գրական շրջանակներում:

Կ. Բալմոնտը երկրորդ անգամ դասախոսություններ կարդալու նպատակով լինում է Թիֆլիսում 1915 թ.:

1917 թ. ամռանը՝ հունիսի 12-ին, Կ. Բալմոնտը կրկին ժամանում է Թիֆլիս: Վրաց նշանավոր բանաստեղծ Տիգրան Տաթևեցի Յովհ. Թումանյանի մասին իր հուշերում գրում է. «1917 թ. ամռան էր: Ես հենց նոր էի Մոսկվայից վերադարձել Թիֆլիս: Ինձ հետ ժամանել էր նաև Կ. Բալմոնտը: ... Հովհաննես Թումանյանին ես առաջին անգամ տեսա Վրացական ակումբի այգում, ընթերցի ժամանակ, որը Բալմոնտի պատվին կազմակերպել էր Սանդրո Կանչելին:

Նա միանգամայն անկախ էր պահում իրեն և ետ չէր մնում Բալմոնտից էքսպրոմտներում, նույնիսկ ռուսերե-

նով:

Մեկ ամիս անց «Слово» թերթում տպագրվեց Բալմոնտի բանաստեղծությունը՝ «Тебе, Ованес Туманян»:

Ինչպես նախորդ այցելությունների ժամանակ, այնպես էլ այս անգամ Բալմոնտի դասախոսությունները ժամանակակից պոեզիայի հարցերի մասին՝ վրաց, ռուս հասարակայնության ներկայացուցիչների հետ ունկնդրել են հայ հասարակայնության ներկայացուցիչներ, գրականության և արվեստի մարդիկ, ուսանողություն, աշակերտություն, ուսուցչություն: Որոշակիորեն այս անգամ հայ գրական շրջանների հետ նրա շփումները եղել են ավելի լայն. լույս էր տեսել Վ. Բրյուսովի «Հայաստանի պոեզիան», և Բալմոնտը

Փառքի շող ես դու ո՛չ միայն Բազմադարյան հողում հայկյան, Այլև փռել ես թալիսման Հեռաստանում ռուսաստանյան, Չկորցնելով ոգիդ սակայն, Պահել շուքդ արևելյան: Դու մեզ համար դարձար Իվան, Դարձար երգիչ մի մոգական, Իմ երգերը դարձրիր վառման, Երգով կառնեմք ամեն սահման, Մեր հանգերը կզրնգան, Ու թե կանչի սև ազդավն այն, Կերգենք, չարը լինի՝ կործան: Մեր երգերն են անտակ օվկիան, Հենց որ շարժենք ցուպի նման Կոսկեզօծվի մուժն անասանան: Քեզ երկար կյանք, լո՛ւյս Թումանյան:

սը թարգմանել է ռուսերեն, Փարիզի Վրացական գրական-գեղարվեստական ակումբի կողմից պրն. Ժորժիաձե և ադրբեյջանյան Ուսանողական միության կողմից պ. Կուլիկ: ... Երեկոյին մախագահում էր պրն. Շիրվանզադեն, որ բացեց հանդեսը և մի քանի խոսքով դրվատեց Յովհ. Թումանյանի կյանքն ու գործը, որից հետո ներկաները հոտընկայա լսեցին Մոցարտի «Մահերգը» ... Այնուհետև երեկոյթի առաջին՝ գրական բաժնի մեջ հետգհետ խոսք առան պրն Ա. Սիսոյան, տիկ. Ջապել Եսայան, պրն պրն Կ. Բալմոնտ, Վարդգես Սիսոյան, Ժորժիաձե, Կուլիկ և Ա. Չոպանյան: Կ. Բալմոնտի ելույթի մասին՝ շաբաթաթերթը գրում է. «... ռուս բանաստեղծ Կ. Բալ-

մոնտը, որ ջերմ ծափերով ընդունվեց

ներկաների կողմից, պատմեց իր համդիպումները Յովհ. Թումանյանի հետ, որը, ըստ Բալմոնտի, իր ճանաչած արևելյան բանաստեղծների մեջ ամենին ինքնատիպը և ամենին գունագեղն է: Իր խոսքից հետո Բալմոնտը կարդաց իր բանաստեղծություններից երկուսը, որոնցից առաջինը գրված է 1917 թ. Երգումի գրված առթիվ և մյուսը գրված վերջին օրերը ու նվիրված Յովհ. Թումանյանի հիշատակին, ինչպես նաև տ. Սիսոյի «Խուսկը» բանաստեղծության թարգմանությունը կատարված դարձյալ Բալմոնտի ձեռքով: ...

Երեկոյթի գեղարվեստական բաժինը կազմված էր բավական ճիշդ: Օր. Մ. Բաբայանը, իրեն հատուկ արվեստով, երգեց երեք կտոր Յովհ. Թումանյանից և թե հայ ժողովրդական երգերից...»: Ի դեպ, նկատենք, որ Յովհ. Թումանյանը մերժում էր անկումային, պեսիմիստական տրամադրություններով առաջնորդվող գրական ուղղությունների ներկայացուցիչների, մասնավորապես սիմվոլիստ և ֆուտուրիստ գրողների ստեղծագործությունները: Սիմվոլիստ բանաստեղծ Կ. Բալմոնտը, թեև, ինչպես նշվեց, եղել է Թումանյանի գործերի առաջին թարգմանիչը և անձնական շփումներ է ունեցել վերջինիս հետ, սակայն արժանացել է հայ բանաստեղծի հետևյալ գնահատանքին. «Բալմոնտը որպես բանաստեղծ տաղանդավոր չէ. նա խոսքի վիրտուոզ է, ուրիշ ոչինչ ...»:

Հայ բանաստեղծին նվիրված ծնունդ տեսնում ենք Կ. Բալմոնտի մախասիրած ռեգային «Ն»-երի հոլովումներ, որ բոլոր տողերի վերջում պահպանվել է նաև թարգմանության մեջ: Ռուս բանաստեղծը 1920 թ. տարագրվում է Ֆրանսիա և հիմնականում բնակվում է Կապրեթտոն գյուղում: Ֆրանսիայում ապրած տարիներին նա շարունակում է լայնորեն շփվել, կապեր հաստատել հայ մտավորականության հետ: Մասնավորապես, 1930-ական թվականների սկզբին Կ. Բալմոնտը ջերմ հարաբերություններ է ունեցել հայտնի դաշնակահարուհի, երգչուհի, երաժշտաբան, մանկավարժ Մարգարիտ Բաբայանի (1874–1968) հետ, որի խոստում վկայությունը վերջինիս ուղղած նամակներն են և նրան նվիրած «Ոսկե ձկնիկի օրը» վերնագրով ուշագրավ ակնարկը:

1923 թ. Փարիզում Կ. Բալմոնտը մասնակցում է Թումանյանի հիշատակին նվիրված երեկոյին: «Հունիս 9-ին Փարիզի բոլոր հայ կազմակերպությունների նախաձեռնությամբ Փարիզի Համալսարանի՝ Սորբոնի «р3ЯБѢ» սրահի մեջ տեղի ունեցավ գրական-գեղարվեստական մեծ երեկոյթ նվիրված Յովհ. Թումանյանի հիշատակին, հաղորդում է Փարիզում հրատարակվող «Հայաստանի ծայն» շաբաթաթերթը՝ «Փարիզի հայության հարգանքը Յովհ. Թումանյանի հիշատակին» վերնագրով նյութի տակ: - Փարիզ գտնվող հայ գրագետները, գեղարվեստագետները և գաղութի հասարակության խումբ բազմությունը եկել էին իրենց հարգանքը մատուցելու հայ ազգային մեծ բանաստեղծի հիշատակին: Հայ գրագետներից բացի Յովհ. Թումանյանի հիշատակը հարգելու եկել էին ռուս մեծանուն բանաստեղծ Կ. Բալմոնտ, որ Յովհ. Թումանյանի գործերից մի քանի-

Անուշավան ԶԱՔԱՐՅԱՆ  
«Պատմաբանասիրական հանդես»-ի գլխավոր խմբագիր, բանասիրական գիտությունների դոկտոր

## ԱՀՌԵԼԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ ՀԱՂԹԱՀԱՐՈՂԸ ԱՐԱ ԽԱԶԱՏՈՒՐՅԱՆ

«Ես բոլորին ասում եմ, որ յուրաքանչյուրս էլ ունենք մեր սեփական էվերեստը: Դա կարող է լինել աշխարհի ամենաբարձր գագաթը նվաճելը կամ քո որոնած ճիշտ աշխատանքը գտնելը: Դա երկար ճանապարհ է և պահանջում է համբերություն, ջանասիրություն և հաստատականություն: Բայց գագաթը նվաճելուց կամ նպատակիդ հասնելուց հետո քեզ պատած զգացումները ամենագեղեցիկ

պահն է աշխարհում: Այդ պատճառով էլ ես միշտ հարցնում եմ իմ խոսակցին կամ դպրոցական աշակերտին՝ ո՞րն է քո էվերեստը», այս խոսքերով է ներկայանում «Միոր Սփեքթերի» էջերում լրագրող Մայքլ Մելքոնյանին 51 տարեկանում էվերեստի 8848 մետր բարձունքը հաղթահարած լեռնագնաց Արա Խաչատուրյանը:

Նա լեռնագնացի փորձառություն չի

ունեցել: Ծնվել է Բեյրութում (Լիբանան) 1964-ին երգումի ծնողների ընտանիքում: Մեծացել է հայկական մթնոլորտում և սկսել զբաղվել ոսկերչությամբ: Երկրում, այսպես կոչված, քաղաքացիական պատերազմի բռնկումով 19 տարեկանում ստիպված է եղել հեռանալ ծննդավայրից և տեղափոխվել Մարսել:

Ֆրանսիայում նյութական և լեզվի իմացության պակասն ստիպել են նրան

շաբաթական յոթ օր և օրական տասնվեց ժամ աշխատել, որպեսզի կարողանար ծայրը ծայրին հասցնել և գոյատևել: Բարեբախտաբար, Մարսելի հայկական համայնքի ջերմ մթնոլորտը մեղմել է նրա դժվարին կացությունը և նպաստել, որ նա առավել սերտորեն առնչվի իր հայկական արմատների հետ՝ ներկա գտնվելով հայկական երգ ու պարով համեմված միջոցառումների: Նա նաև խորացրել



ՀԻՇԱՏԱԿԻ ԽՈՍՔ

## Տապալվում են Ջավախք աշխարհի սյուները...

Առասպելական ու գեղատեսիլ Ջավախքը հայոց հավաքական հիշողության մեջ այդպես ամուր ու կենսունակ է մնում իր արիասիրտ զավակներով:

Եվ երբ ամեն անգամ ինչ-որ կորստի մի բոթ է գալիս Ջավախքից, բոլորս էլ հասկանում ենք, որ այդ աշխարհի մի ամուր սյուն կամ հաստաբուն մի ծառ ճղակոտոր եղավ:

Անժամանակ մի կորուստ ունեցանք: Կյանքից հեռացողը հրաշալի հայրենասեր գերդաստանի զավակ էր՝ ծանաչված լրագրող Աղասի Մելքոնյանի ավագ որդին և նույնքան նշանավոր պատմաբան, պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի եղբայրը՝ Կարապետ Մելքոնյանը:

Ափսո՛ւ, հազար ափսո՛ւ իրեն, որ չհասցրեց երկրային կյանքի գոնե յոթերորդ տասնամյակի սահմանը:

Ափսո՛ւ, հազար ափսո՛ւ Ջավախք աշխարհին, որ կորցրեց իր արի, խիզախ ու հանդուգն հայրենասեր զավակներից մեկին:

Կարապետն ինքն էր ստեղծում իր համար հարթակներ ու ամբիոններ հայրենասիրական անխարդախ գործունեություն ծավալելու, ազգային նվիրական գաղափարներին ծառայելու համար:

Բնատուր ծիրքերն ու շնորհները նա լիաթոք ու լիասիրտ կերպով օգտագործեց իր հայրենի քաղաքին ծառայելու, նրա ժողովրդին ոգևորելու, ոգեշնչելու և թևավորելու համար:

Կարապետ Մելքոնյանը արվեստասեր անհատականություն էր, իսկ նախասիրությունների ու լորտը երաժշտության ասպարեզն էր: Տասնամյակներ շարունակ հանդես է եկել հայրենի քաղաքում գործող «Ջավախք» վոկալ գործիքային համույթի կազմում: «Ջավախքը» մեծ հեղինակություն է վայելել ողջ երկրամասում: Կարապետն իր արվեստագետ ընկերների ու զինակիցների հետ այդ հեղինակությունը ստեղծող ու դարբնող այրերից էր: Հայկական բնակավայրերում անհամբերությամբ, հուզական սրտատրոփ թրթռներով էին սպասում «Ջավախքի» հետ յուրաքանչյուր հանդիպմանը, որը վերածվում էր ոգեղեն հզոր լիցքերով լեցուն տոնի: Անսպառ կրթով ու եռանդով լեցուն էին «Ջա-

վախքի» տղաները և կարողանում էին ցանկացած հարթակից, ցանկացած գյուղական բեմում ու դահլիճում ազգային վառ տեսլականով թևավորել հավաքված բազմությանը, ոգու կատարյալ հանդիսատեսին:

Կարապետ Մելքոնյանը ընտանիքի անդամների, հարազատների, ընկերների հետ հաստատակամորեն կանգնեց մարտնչող Արցախին ամեն կերպ ու ամեն ինչով գորակցելու դիրքերի վրա: Դա 1990-ական թվականների սկիզբն էր և կյանքը Ջավախքում էլ էր վատացել, բայց, այնուամենայնիվ, ջավախահայությունը եղած ու չեղած միջոցներով գորավիզ եղավ Արցախյան ռազմադաշտերում մարտնչող հայկական ինքնապաշտպանական ուժերի մարտունակության բարձրացման հանձնառությանը: Մելքոնյան գերդաստանի յուրաքանչյուր անդամ իր կարելիության սահմաններում օգնեց վտանգված Արցախին օգնություն տրամադրելու գործին: Պատերազմը հայության համար այս անգամ հաղթական ելք ունեցավ, և դա աննկարագրելի ցնծություն և խանդավառություն առաջացրեց նաև Ջավախքում: Կարոն ու իր ընկերները «Ջավախք» համույթով ամեն անգամ հայտնվում էին արդեն համաժողովրդական ուրա-

խության կիզակետում և ներկաների հոգին ու սիրտը «վառում» հայրենասիրական ու ազգասիրության թունդ հրայրքով:

Հետո եկան այլ ժամանակներ, երբ արդեն պետք էր ոգևորել ջավախքցուն ամուր մնալու իր հողի վրա, չտրվելու ոչ մի սադրանքի և չստեղծելու ազգամիջյան վտանգավոր լարվածություն: Այդ նպատակադրումով նա 2000-ականների սկզբին հիմնեց Ջավախքում հայրենով հեռարձակվող հեռուստատեսային ալիք: ATV-12 հեռուստաընկերությունը նորից բորբոք պահեց հայկական շունչն ու ոգին և հայրենասիրության հավելյալ պաշարներ հաղորդեց ջավախքցի հայ մարդու արյանն ու ուղեղին:

Կարապետ Մելքոնյանի և եղբոր՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանի ջանքերով ATV-12-ը սերտ համագործակցություն հաստատեց հայաստանյան մի շարք լրատվամիջոցների՝ մասնավորապես «Երկիր-մեդիա», «Կենտրոն», «Հ-1» հեռուստաալիքների, ինչպես նաև Սփյուռքի նախարարության հետ: Այդ համագործակցության արդյունքում շահեց ջավախքցի հեռուստադիտողը, քանզի բովանդակային և տեսակային չափանիշներով հարստացան մատուցվող նյութը և հատկապես ազգային բաղադրիչները:

Հայաստանյան լուրերն ու հոգևոր-բարոյական ողջ հոգեմայրը անմիջապես հայտնվում էր Ջավախքի հայության ուշադրության առանցքում:

Դրական միտումներն ու արծազանքները ակնհայտ էին:

Կարապետ Մելքոնյանը գործընկերների հետ օր-օրի, ամսե ամիս ու տարեց տարի ջանում էր առավել արդյունավետ ու տպավորիչ դարձնել իր հիմնադրած հեռուստաընկերության աշխատանքը:

Ավա՛ղ տեղյակ չէր, որ իր մարմնում բուն է դրել դավադիր անբուժելի հիվանդությունը: 2019 թ. մարտի 30-ին նա այլևս չկար:

Ջավախքի հայությունը համաժողովրդական խորին վշտով ծանապարհ դրեց իր այնքան սիրելի Կարոյին:

Կորուստն անանց էր ու անփոխարինելի: Մնացին նրա թողած բառն ու բանը, նրա ընկերական ու մարդկային մեծ առաքինություններն ու հմայքը:

Ջավախք աշխարհի հոգևոր երկնականաբուն՝ բարձրաբերձ երկնքի ներքո հիմա հայր և որդի՝ Աղասի և Կարապետ Մելքոնյանները հավերժում են միասին:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ  
Պատմական գիտությունների թեկնածու,  
գրող-հրապարակախոս

## ԱՀՌԵԼԻ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐ ՀԱՂԹԱՀԱՐՈՂԸ...

➤6 է իր գիտելիքները ոսկերչության ասպարեզում: Զբաղվել է սպորտով, մասնակցել մարաթոնյան վազքերի: Երբ Ֆրանսիայում մոր ձեռք բերած ընկերներից մեկը լսել է այդ մասին, առաջարկել է նրան ընկերակցել իրեն Եվրոպայի բարձրագույն գագաթը՝ Մոնթբլանը նվաճելու իր ծրագրում:

Մոնթբլանը ծանաչված է որպես աշխարհում ամենամահացու լեռը, որի մագլցողներից տարեկան շուրջ հարյուր հոգի է մահանում: Մինչ օրս 6000-ից 8000 մահվան դեպք է գրանցվել աշխարհում:

Ֆիզիկական լավ մարզավիճակում լինելով Արան ընդունել է «մարտահրավերը» և լեռնագնաց մասնագետի մոտ կարճ ժամանակ դասերի հաճախելով ու օգտակար խորհուրդներ լսելով պատրաստվել բացահայտելու իր համար նոր հորիզոններ:

Իր ընկերոջ և մարզիչի հետ դժվարանցանքի բարձունքը նա նվաճել է առավոտյան 6.30-ին և հիացել արևածագի ապշեցնող տեսարանով: Սա ոգևորել է նրան և երբ դրանից հետո Արարատ լեռն է բարձրացել, խոստովանել է, որ «մեծագույն հաճույք պատճառող ամենագեղեցիկ բարձունքն է նվաճել»: Այնուհետև,

սիրահարվելով լեռնագնացությանը, նա նվաճել է նաև Աֆրիկայում Կիլիմանջարո լեռան գագաթը և իր առջև նպատակ դրել հաղթահարել Եվրեասի բարձունքը: Նա մտադրվել է խստապահանջ մարզունների և աշխարհի մի շարք լեռներ մագլցելուց հետո ձեռնամուխ լինել այդ դժվարին նախաձեռնությանը 2015-ի գարնանը՝ ի նշանավորումն Հայոց ցեղասպանության 100-ամյակի հիշատակություններին:

«Գաղտնիքը վախը հաղթահարելու մեջ է», խորհուրդ է տալիս ապագա լեռնագնացներին և ավելացնում. «Ամենասարսափելի մասը, այսպես կոչված, «մահվան գոտին» հաղթահարելն է: Այդ եզրը լեռնագնացներն են հորինել բնորոշելու համար 8000 մետր բարձրության վրա գտնվող հատվածը, որտեղ շնչելը առավել դժվարանում է, և մարդիկ կարող են ընդամենը թթվածինի 30 տոկոսը շնչել: Սովորաբար այս հատվածում են տեղի ունենում ամենաշատ մահացության դեպքերը, և մահացածները սառած վիճակում հավերժ մնում են այնտեղ, որովհետև հնարավոր չէ նրանց տեղափոխելը: Այն հարցին, թե ի՞նչ էր նա զգացել այդ դիպվածները տեսնելիս, Արան պատասխանել է.

«Դրանք էլ ավելի ուժեղացրին գագաթը նվաճելու իմ ձգտումը: Ես դա պետք է իրականություն դարձնեի ոչ միայն ինձ, այլև իմ ժողովրդի և իմ ընկեր լեռնագնացների համար»:

Նա իրականություն դարձնում է իր երազանքը, բայց ոչ առանց կորստի: Որպես ցրտահարության հետևանք նա կորցնում է ոտքի երկու բութ մատների վերջույթները: Վերջին հատվածը նա 12 ժամում է հաղթահարում և հասնում գագաթը օրվա կեսօրին: Ընկերները ոգևորված հետևում են նրան: Տարիների մարզունները, մտավոր ու ֆիզիկական կարգապահությունը, ինչպես նաև հետևողական ջանասիրությունը նպաստում են, որ նա 51 տարեկանում հպարտորեն կանգնի աշխարհի բարձրագույն լեռան գագաթին, ինչը աշխարհում միայն 4000 մարդու է բախտ վիճակվել: Իր ընկերների հետ նա այնտեղ մնում է 30 րոպե, իսկ ամբողջ ընթացքը՝ ստորոտից մինչև գագաթ տևում է մի ամսից մի փոքր ավելի: Այդ ժամանակահատվածի մեծ մասը կլիմային ընտելանալու վրա է ծախսվել:

Նա այժմ մի նոր փորձության է նախապատրաստվում: Նպատակ է դրել հաղթահարել 1903 ծովային մղոմներ և



Միջերկրականով նավարկել Մարսելից Բեյրութ՝ իր նոր բնակավայրից դեպի իր ծննդավայրը:

Հաջողություն մաղթենք նրան ցանկանալով, որ նա անփորձանք հաղթահարի նաև այս փորձությունը:



## Երկու տարվա ընթացքում վեց աստղակերպ կմոտենա Երկրին

2027 թվականից հետո ընկած ժամանակաշրջանում երկու տարվա ընթացքում վեց աստղակերպ կմոտենա Երկրին: Այդ մասին հայտնել է Space.com ինտերնետ-պորտալը՝ վկայակոչելով ԱՄՆ-ի Օդազնացության և տիեզերական տարածության հետազոտման ազգային վարչության (NASA) մասնագետներին, որոնք մասնակցում են Աստղակերպերից պաշտպանության հարցերին նվիրված Խորհրդաժողովին՝ Օդազնացության միջազգային ակադեմիայի շրջանակներում:




«Վեց աստղակերպերից առաջինը Երկրին կմոտենա 2027 թվականին», - հայտնել է Փաստադեմայի ռեակտիվ շարժման լաբորատորիայի աշխատակից Լենա Բենները: Այդ երկնային մարմինը, որն ստացել է 1990 MU անվանումը, մախնական գնահատումների համաձայն՝ ունի 2,8 կիլոմետր տրամագիծ: Դրանից հետո Երկրին կմոտենան ևս մի քանի աստղակերպեր, ընդ որում, յուրաքանչյուր այդպիսի իրադարձության միջև ժամանակամիջոցը, Բենների խոսքով՝ կլինի «ոչ երկարատև»:

Այդ վեցյակից վերջինը՝ Ապոֆիս աստղակերպը, Երկրին կմոտենա 2029 թվականին: Փորձագետն ընդգծել է, որ այդ երկնային մարմիններից ոչ մեկն սպառնալիք չի ներկայացնի Երկրի համար, թեև վեցից երկուսը կանցնեն ավելի փոքր հեռավորությամբ, քան Երկրից մինչև Լուսին հեռավորությունը է:

NASA-ի գնահատումներով երկրաշուրջ տարածությունում կարող են գտնվել մոտավորապես 17 հազար տակավին չհայտնաբերված աստղակերպեր, հաղորդել է SUSA-ը:

## Աստղադիտակ



Աստղադիտակը հնարավորություն է տալիս տեսնել անգն աչքով անտեսանելի առարկաները՝ հավաքելով լույսը և ձագարի նման ուղղելով դիտորդի աչքի մեջ:

Գոյություն ունեն տարբեր աստղադիտակներ՝ ամենապարզից մինչև հատուկ կառույցներում տեղակայված վիթխարի աստղադիտակները:

XVII դարի ակնոց պատրաստող դանիացի ապակեգործները հնարեցին դիտակը: Համարվում է, որ առաջին աստղադիտակը ստեղծել է պատմիկ ակնոց պատրաստող հոլանդացի Հանս Լիպերս-գեյը 1608 թ.-ին: Դրա հիմնական մասը ուսանական էր: Իսկ մինչ այդ դիտորդ-աստղագետների գործիքը սեքստանտն էր՝ աստղադիտակի անկյունաչափ սարքը:

Արդեն 1609 թ.-ին ֆիզիկոս, մաթեմատիկոս և աստղագետ Գալիլեյո Գալիլեյը իտալական Պադուա քաղաքում իր ձեռքերով պատրաստեց նույնպիսի մի դիտակ և այն ուղղեց դեպի աստղալից երկինք: Գալիլեյի դիտակը մեծացնում էր ընդամենը 3 անգամ, սակայն դրա օգնությամբ գիտնականը բազմաթիվ մոր բաներ տեսավ և այնքան պայծառ, ինչպես ոչ ոք դեռ չէր տեսել:

Ի վերջո, Գալիլեյին հաջողվեց պատրաստել 32 անգամ մեծացնող աստղադիտակ, որով նա շատ հայտնագործություններ կատարեց Լուսնի, Արեգակի և մոլորակների վերաբերյալ:

1671 թ.-ին Նյուտոնը ստեղծեց անդ-

րադարձումային աստղադիտակ՝ ռեֆլեկտոր, որտեղ, ի տարբերություն ռեֆրակտորի, օբյեկտիվի ոսպնյակը փոխարինված էր գոգավոր հայելով:

Աստղադիտակները, որոնք հավաքում են լույսը, կոչվում են օպտիկական: Պարզագույն ռեֆրակտորը կազմված է խողովակից և դրա ծայրերում դրված 2 ոսպնյակներից: Առաջին ոսպնյակը՝ օբյեկտիվը, հավաքում է հեռավոր առարկայից եկող լույսը և դրա ճառագայթները կենտրոնացնում միատեղ՝ առարկայի պատկերը ստանալու համար: Այդ պատկերը մեծացվում է երկրորդ ոսպնյակով՝ օկուլյարով, որի միջով մենք դիտում ենք հեռավոր առարկան:

Որքան մեծ է աստղադիտակի գլխավոր հայելին կամ ոսպնյակը, այնքան ավելի շատ լույս է հավաքում, և այնքան ավելի թույլ օբյեկտներ է հնարավոր դիտել նրանով: Մթնոլորտի գետնամերձ շերտում կատարվող տարբեր երևույթներ հաճախ խանգարում են ստանալ այն ամբողջ տեղեկությունները, որոնք կարող է աստղադիտակը տալ: Ուստի հաճախ հարկ է լինում աստղադիտարանները կառուցել բարձր լեռներում կամ տեղադրել ուղարկվող սարքերի վրա:

Գիտնականները սովորել են հաշվարկել հեռավոր աստղերի ջերմաստիճանները, չափերն ու զանգվածը, դրանց հեռավորությունը Երկրից: Այդ ամբողջ աշխատանքը կատարվում է աստղադիտարաններում, որոնց աշտարակների գմբեթը կարող է պտտվել: Եթե գմբեթում տեղադրված աստղադիտակն ուղղվում է դեպի ընտրված աստղը, և համակարգիչով կարգավորվում է հետևող համակարգի մեխանիզմը, ապա աստղադիտակն ինքն է սկսում հետևել աստղին՝ նրա օրական շարժման ուղղությամբ: Իսկ աստղադիտակի սարքերը լուսանկարչական թիթեղի կամ ժապավենի վրա ինքնուրույն դրոշմում են այն ամենը, ինչ կատարվում է աստղի հետ:

## 39 հայ պիմվորների նշանավորումը աշխարհում

Հայերենին նվիրված հուշակոթողներն ամենուր են, աշխարհի բոլոր ծագերում, որտեղ դիպել է հայի ոտքը:

Սան Պաուլոյի սրտում (Բրազիլիա), Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու բակում, վեր է խոյանում հայոց այբուբենին նվիրված, հայկական համայնքի նախաձեռնությամբ կառուցված հուշարձանը:

ԱՄՆ-ի Օհայո նահանգի Քլիվլենդ քաղաքում փոքրիկ այգի կա, որ կոչվում է «Հայկական արվեստի այգի»: 2010 թ.-ին այնտեղ կանգնեցվեց հայոց այբուբենին նվիրված ևս մեկ հուշակոթող, որի մի կողմում փորագրված են հայերեն տառերը, մյուս կողմում՝ հայ անվանի արվեստի գործիչների անունները:

Ալթայի տարածաշրջանի 70-ամյակի առիթով հայերը Բառնաուլ քաղաքին նվիրեցին հայ-ռուսական բարեկամությունը խորհրդանշող հուշարձան: Այն իրենից ներկայացնում է բացված գիրք, որի մի էջին հայոց, մյուսին՝ ռուսերենի այբուբենն է, իսկ ներքևում ոսկե բանալի:

Նմանատիպ մի նվեր էլ իբրև բարեկամության և հանդուրժողականության խորհրդանիշ, Նովոկուզնեցկ քաղաքին արեց «Союз армян Кузбасса» ֆոնդի ներկայացուցիչ Սարիկ Աբրահամյանը:

ԱՄՆ-ի Պրովիդենս քաղաքում «Հայոց ժառանգության այգում» տեղադրված է հայոց այբուբենը պատկերող հուշարձան: Այն նվիրված է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին, որը զարդարում է «Քանի դեռ հնչում է հայերեն խոսքը, և գոյություն ունի հայ գրականությունը, Հայաստանը կապրի» գրությունը: Կիպրոսի Մելքոնյան վարժարանը (Melkonian Educational Institute, MEI) կառուցվել է 1926 թ.-ին Գրիգոր և Կարապետ Մելքոնյանների կողմից: Վարժարանի բակում տեղադրված է Հայոց այբուբենին նվիրված հուշարձան:

Մետրոպոլիտանի նվիրված ամենահայտնի կոթողներից մեկն էլ կանգնեցված է Երևանի Մատենադարանի բակում: Իր աշակերտ Կորյունին Մաշտոցը ծանոթացնում է հայերենի տառերին: Արձանի հեղինակը Ղուկաս Չուբարյանն է:

Արագած լեռան արևելյան լանջին 2005 թ.-ին կառուցված «Տառերի պուրակը» նվիրված է հայոց գրերի ստեղծման 1600-ամյակին: Հուշարձանը ներառում է հայոց այբուբենի 39 տառերի զարդաքանդակները և հայ մեծերի հուշարձանները:

Մայրենի լեզվին նվիրված ամենամեծ հուշակոթողը մեր ներսինն է, այն կանգուն պահելու պարտականությունը՝ բոլորինս է:

Տաթևիկ ՍԱՐԳՍՅԱՆ

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

### ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի վարիչի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար.

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր ունեն՝

- ա) պատմական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան,
- բ) գիտական գործունեության առնվազն 10 տարվա փորձ,
- գ) վերջին 5 տարվա ընթացքում հեղինակ է առնվազն գիտական 10 աշխատության:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ ՊՈԱԿ-ի Հին դարերի պատմության բաժնի վարիչի թափուր պաշտոնի մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը՝

- ա) գրավոր դիմում,
- բ) երկու լուսանկար՝ է չափի,
- գ) քաղվածք աշխատանքային գրքույկից,
- դ) ինքնակենսագրություն,
- ե) ամձնագրի պատճեն,
- զ) թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճանը հավաստող փաստաթուղթ,
- է) կարգերի հաշվառման ամձնական թերթիկ՝ լրացված,
- ը) բնութագիր վերջին աշխատավայրից,
- թ) հրատարակված աշխատությունների ցանկ՝ հաստատված համապատասխան կարգով.

Մրցույթին մասնակցելու համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել սույն հայտարարության հրապարակման օրվանից սկսած մեկ ամսվա ընթացքում (բացի շաբաթ և կիրակի օրերից) Պատմության ինստիտուտի գիտքարտուղարին:

Հասցեն՝ Երևան, Մ. Բաղրամյան պողոտա 24/4, հեռախոս՝ 010581931:

### ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. դեկտեմբերի 1-2-ը ինստիտուտի բոլոր բաժիններում անցկացնել բաժնի վարիչների թեկնածուների փակ զաղումի քվեարկություն: Նիստն օրինական է, եթե մասնակցում է բաժնի աշխատակիցների 2/3-ը, քվեարկության արդյունքը դրական է, եթե թեկնածուն(երը) ստացել է ձայների պարզ մեծամասնությունը (քվեարկելու իրավունք ունեն միայն գիտական աշխատողները):

ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ

## Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14, 077 31 63 76

Դասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:

Ստորագրված է տպագրության՝ 23.05.2019 թ.:

"ГИТУТИОН" ("Найка") газета НАН РА